«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

1 Հուլիսի 2022, N 13 - 5

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏՈՒՄ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 28-Ի «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐՈՒՄ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԿՇԻՌՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով «Առկա ուսուցման բակալավրիատում յուրաքանչյուր կիսամյակում քննությունների առավելագույն քանակը սահմանելու և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2012 թվականի մարտի 28-ի «Ուսումնական պլանի նորմատիվներում և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի գործոնների կշիռներում փոփոխություններ կատարելու մասին» որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյան), հաշվի առնելով, որ վերոնշյալ որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ և 10-րդ կետերը կարգավորվում են «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերով», իսկ 4-րդ կետը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի մշակման, գնահատման և մշտադիտարկման կարգով»՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. Առկա ուսուցման բակալավրիատում յուրաքանչյուր կիսամյակում քննությունների առավելագույն քանակը սահմանել 7 (յոթ):

2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2012 թվականի մարտի 28-ի «Ուսումնական պլանի նորմատիվներում և գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի գործոնների կշիռներում փոփոխություններ կատարելու մասին» որոշումը:

3. Հանձնարարել ֆակուլտետների դեկաններին, ամբիոններին, ուսումնական բաժնին՝ վերանայել գործող ուսումնական պլանները և ըստ անհրաժեշտության STEM ոլորտի, օտար լեզուների և մասնագիտական ստուգարքային առարկաները դարձնել քննական՝ պահպանելով դրանց կրեդիտային բեռնվածությունը և ժամաքանակը:

4. Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝ ամբիոնների նիստերում հաստատել քննական դարձած առարկաների ստուգման ձևաչափը (բանավոր հարցում, թեստ):

5. Սույն որոշման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022-2023 ուսումնական տարվանից:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան